

ու անհայտապես մըսթենակներուն ունի ուրաքանչ և առաջ ունի
առաջ մայդանական ունակութ ու ունի ազգայի մասնակութ և ա-
ռաջ անհայտ մայդանական ունակութ ունի ու ունի ազգայի մասնակութ և ա-
ռաջ անհայտ մայդանական ունակութ ունի ու ունի ազգայի մասնակութ և ա-
ռաջ անհայտ մայդանական ունակութ ունի ու ունի ազգայի մասնակութ և ա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴՊՐՈՑԵԿՈՆ ՂԵԿՎԵՐՈՒԹԵՐՆ ՄԵԹՈԴԻԿ

(Հարունակութիւն).

5. Պատիժ: ա) Եթէ զեկավարութեան կատարած սխալների պատճառաւ անհաղանդութեան գէպքեր են պատահում աշակերտների մէջ, ուսուցիչը այնու ամենայնիւ պիտի կարողանայ իւրը անել տալ և հնազանդութեան բերել: Ատիպելու միջոց համարւումէ պատիժը:

Պէտք չէ իրար խառնել ոյն պատիժը, որ մանկավարժական միտք ունի և այն պատիժը, որ իրաւաբանական է: Գոյութիւն ունեցող իրաւաբանական ուսութիւնները յարմարեցնել չէ կարելի գպրոցական պատիժներին և մանկավարժական պատիժի ոչ էութիւնը և ոչ նպատակը գոքա չեն պարզում: Մանկավարժական պատիժը էր էլլու-աղջէլ- միջոց չէ: Պատահաբական է և իւրաքանչ ընտրել մէջին և որու օրինակով մի-ունեցին սակէցնել: Մանկավարժական պատիժը ի նկատի ունի պատժուղղի օգուտը, և ոչ թէ նորա ընկերներինը: Մանկավարժական պատիժը պատուհասող միջոց չէ: Պատուհասելով՝ ճշմարիտ է, հաշտութիւն է կատարւում արդարութեան զեղծուած օրէնքի տռած, բայց այդ հիմունք ունի և հասկանալի է հասակաւոր մարդու յանցանքի վերաբերութեամբ և անցարմար է գործ դնել գպրոցական կանոնների զեղծման գէմ, մանաւանդ որ՝ թէ կանոնները յաճախ խիստ պայմանական են լինում, և թէ զեկծում անողը ոչ

ըմբռնում է լաւապէս իւր գործողութիւնների նշանակութիւնը, և ոչ հաստատուն կամքի տէր է: Պատիժը մանկավարժական մըտքով ուղղելու էլ միջոց չէ, զոնէ մանկավարժական պատժի ամենամերձաւոր և անմիջական գործողութիւնը ուղղելու նպատակաւ չէ: Այս խօսքերով մենք չենք ուղում հերքել, որ դպրոցական պատիժը յայտնի չափով կարող է և՛ երկիւղ ազգել, և պատժուղի խիղճը հանգստացնել և բարոյապէս ուղղուելու դըրդիչ դառնալ:

Սակայն այդ բոլոր նշաններով դեռ չէ բնարոշւում պատժի էութիւնը մանկավարժական մոքով: Այդ մոքով պատիժը մի միջոց է, որ յիշեցնումէ աշակերտին այն հրամանը կամ արգելքը, որ նա մոռացել էր և յուղումէ նորանում պարտաճանաչութեան զգացմունք:

բ) Նպատակայարմար կերպով պատիժ նշանակելու առաջին պայմանն է այն, որ ընտրուած պատիժը սերտ կապ ունենայ այն գործողութեան հետ, որը պատժի է արժանացած: Ուրեմն պատժի ձեւերը այնքան շատ են, որքան շատ են և բազմազան երեխաների արարմունքները: Սակայն՝ որքան էլ բազմազան լինին պատժի ձեւերը, երկու գլխաւոր կարգերի կարելի է բաժանել դոցա պատիժը կամ զրկումէ աշակերտին մի որեւ է բարիքից, և կամ յայտնի վնաս է հասցնում:

Պատժով աշակերտը կարող է զրկուել կամ իւր սեպհական իրեղէնից, կամ որեւ է զուարձութիւնից, և կամ նորա լինակը կարող է փոխուել հարկաւ լաւից գէպի վատը:

1) Նիւթական զրկողութիւնք, աշակերտի իրեղէնքի կորուստ պատճառող պատիժները նպատակայարմար են լինում միայն այն գէպում, երբ նոյն խոկ այդ իրեղէնն ունենալը յանցանքի առիթ է առուել: Այսպէս օրինակ, եթէ աշակերտը իւր սեպհական ձեռնափայտով ծեծել է ընկերակցին, նա կարող է զրկուել այդ ձեռնափայտից: Եթէ աշակերտները նկատուած են անհաշիւ խաղ անելիս փողով, նոքա զրկուում ունեցած փողերից, որովհետեւ չէին իմանում ինչպէս հարկն է գործ զնել այդ փողերը: Ընդհանրապէս պէտք է զգուշանալ դրամական առոգան-

քով պատժելիս, որովհետեւ այդ պատիժը յանախ պատռէշառում է ոչ երեխաներին, այլ ծնողներին։ 2) Զուարձութիւնից զրկող պատիժ կարելի է նշանակել այն գէպօւմ երբ աշակերտը մի որեւ է զուարձութիւն էթոյլատրել իրան՝ հակառակ արգելքի։ Հարկաւոր է խուսափել այն պատիժներից, որոց հետեւանքն է լինում կերակրից զրկուել, որովհետեւ այդ վնաս է հասցնում առողջութեան։ Աւելի յարմար է բարոյական զրկողութիւն անել, օրինակ զրկել յայտնի խաղերին, կամ հետաքրքրական պարապմունքներին մասնակցելուց։ Եթէ սոյնօրինակ պատիժները շատ յաճախ չեն նշանակում՝ շատ զգալի են լինում աշակերտների համար, և եթէ դոցա հետեւանքը կորուստ լինի ուսուցման կողմից, կարգապահութեան տեսակէտից այդպիսի պատիժները կարող են օգտակար լինել։ 3) Աերջապէս աշակերտը կարող է զրկուել յայտնի արտօնութիւնից, որ ստանում է իրեւ աշակերտ։ Օրինակի համար, այն աշակերտը, որը դասարանում անուշագիր է և խանգարումէ դասարանական պարապմունքները, կարելի է հեռացնել դասարանից։ Աւելի ծանր յանցանքների պատճառաւ աշակերտին կարելի է զրկել ժամանակաւորապէս դպրոց այցելելու իրաւունքից կամ մինչեւ իսկ խաղառ արտաքսել ուսումնարանից։ Ի հարկէ ժամանակաւորապէս հեռացնել աշակերտին յարմար է այն գէպօւմ, երբ այդ մեծ վնաս չի հասցնի ուսման։ իսկ վերջնական արտաքսումը թոյլատրելի է միայն այն պայմանով, որ աշակերտի առաջ արգելք զինի ուրիշ ուսումնարանում կամ տանը աւարտել իւր կրթութիւնը։ Պատժի հասցրած վնասը աշակերտի համար կարող է լինել կամ ամօթանք կրելը, կամ ազատութիւնից զրկուելը կամ վերջապէս մարմնաւոր ցաւի ենթարկուելը։

Ա. ԶԵՆԱՆԻ: Այն մարդը, որ զուրկ չէ պատռոյ զգացմունքից, ուզումէ, որ շրջապատողները լաւ կարծիք ունենան իւր մասին։ Երեխան ուրախ է լինում, երբ նորան գովում են։ Նախատինքը՝ որքան խիստ է արտայայտուած և պարզ, այնքան աւելի շփոթեցնումէ երեխային։ Այս տեսակ պատիժների կարգում պիտի հաշուել բոլոր նկատողութիւնները, խրատները և սաստումնե-

ըլ: Ապա սոցա թւում պիտի համարել նաև պատժի այն ձեերը, որոնցով աշակերտի վարմունքին նախատինք է արտայայտում ոչ խօսքով, այլ գործով: Այսպէս օրինակի համար, եթէ աշակերտը ուշացել է դասի՝ կարելի է հրամայել նորան դրսի դրանը կանգնել որոշ ժամանակ: Զարանձի տղաներին այնպէս են կանգնեցնում այդ գէպքում, որ նորա իւրաքանչիւր շարժումը ուսուցիլ կարողանայ նկատել: Ամօթանը բերող պատիժները ի հարկէ նշանակութիւն ունին այն ժամանակ, երբ արդարեւ կարող են որոշ չափով շիռթեցնել աշակերտին: Երբ շատ յաճախ են կրկնուում այդպիսի պատիժները, ոչ մի տպաւորութիւն չեն անում և նպաստում են երեխաների ամօթխածութեան բթանալուն: Միւս կողմից ամօթանք ազգող պատիժը երբեմն կարող է խիստ ցաւեցնել երեխայի փափուկ հոգին և հոգեկան վտանգաւոր երևոյթներ յառաջացնել: Ուրեմն ամաշեցնող պատիժներ տալը, որքան էլ անբարդ բան լինի և բնական, մի առանձին զգուշութիւն է պահանջում ուսուցչից:

Աղապունինից զբիռ-էլլ: Հարժուելու և տեղափոխուելու պահանջը խիստ մեծ է թէ մանկութեան հասակում, և թէ պատանեկութեան: Իբրև մի մեծ բարիք է աշակերտների համար ազատութիւնը, ընդհակառակը տանջանք է նոցա համար ամեն մի ճնշում: Այդ պատճառաւ ազատ շարժումից զրկող պատիժը ամենածանրն է համարւում դաստիարակուող հասակի վերաբերեալ: Մասնաւորապէս՝ դպրոցներում այդ տեսակ պատիժներից երկուսն են գործածւում գլխաւորապէս՝ ստիպողական տրնացին աշխատանք և դասերից յետոյ դասարանում մնացնելը: Ստիպողական արտակարգ պարապմունք տալիս են այն երեխաներին, որոնք հարկ եղածի չափ ուշագիր չեն դասարանում և այդ պատճառով յետ են մնում ընկերներից: Այս պատժի փոխարէն՝ աշակերտին պահում են դպրոցում դասերից յետոյ, երբ վստահ չեն, որ ոնային պայմանները նպաստաւոր են կանոնաւոր պարապմունքի համար, և կամ, որպանից անկախ այդպիսի պատիժ նշանակում է այն աշակերտին, որը դպրոցից տուն վերադառնողիս չարութեան մէջ է նկատուած: Երբ դըպ-

բոցումն են պահում աշակերտին գասերից յետոյ, հարկաւոր է, որ երկու պայման անպատճառ կատարուի: Առաջինն այն է, որ դպրոցում մնացող աշակերտը ուսուցչի հսկողութեան տակ պիտի լինի, երկրորդը որ նա իւր գրութեան համապատասխանող տարապմունք ունենայ: Եթէ այս երկու պայմանները անտես առնուին, պատիժը միայն վնաս կարող է բերել: Յիշենք նաև, որ աշակերտին պէտք է պահել այնպիսի սենեակում, որի օդը բաւականաչափ մաքուր է: Անել զրութեան մէջ կարելի է համոձայնուել, որ աշակերտները գասերի ժամանակ նստեն շրջառութեամբ և մարմնի գոլորշիներով ապականուած մթնոլորտի մէջ. բայց իրբեւ պատիժ ստիպել, որ աշակերտը շնչէ գասարանի ապականուած օդը—այդ արդէն բարբարոսութիւն է, որ տեղիք ունենալու չէ կանոնաւորուած դպրոցում: Առանձնացնել աշակերտին մահաւանդ մութ սենեակում ոչ մի դէպքում թոյլատրելի չէ: Առանձնութիւնը, առաւել ևս մութը, երկիւղ են աղջում շատ երեխաների վրայ: Անել զրութեան մէջ ահը՝ աշակերտի վրայ կարող է ծանր հիւանդութիւններ բերել: Երբ աշակերտին պահում են դպրոցում գասերի վերջը, ամեն անգամ այդ մասին պէտք է հաղորդել ծնողաց, որ նոքա անհանգիստ զինեն երեխաների բացակայութեան պատճառաւ, և որ երեխաներն էլ առիթ չունենան խաբելու ուշ տուն վերադառնալու պատճառը բացատրելիս:

Մարմնաւոր պատիժ: Մարմնաւոր պատիժ է համարւում մարմնաւոր ցաւ հասցնելը աշակերտին զարնելով կամ այլ կերպ: Երեխայոց վրայ գործածւող մարմնաւոր պատիժների գլխաւոր տեսակներն են. քանոնով ծեծել, ապտակել ականջները քաշել, մաղերից քաշել, ճիպոտել: Մարմնաւոր պատիժի վերաբերեալ մանկավարժները իրար բոլորովին հակառակ կարծիքներ են յայտնում: Գերմանացի մանկավարժները, քիչ բացառութեամբ, մարմնաւոր պատիժի կողմն են, թէև ճիպոտելու անհրաժեշտութիւնը դուրս են բերում ոչ թէ իրբեւ օրէնք մանկավարժական գիտութեան, ապա իրբեւ մի ակնյայտնի թուլութիւն հաստրակական կողիտ բարբերի առաջ: Աւտրիական մանկավարժները

ճիպոտի դէմ են: Գերմանացի դպրոցագէտները այդ հանգամանքը բացադրելիս ցոյց են տալիս, որ աւստրիական դպրոցական կանոնները թոյլ են տալիս աշակերտին հեռացնել դպրոցից ժամանակաւորապէս և դորանով ճիպոտը մասամբ փոխիրանւում է: Խոկ այնտեղ, ուր դպրոցները զուրկ են յիշեալ իրաւունքից, ինչպէս օրինակ գերմանիայում, առանց ճիպոտի, նոցա կարծիքով, գործ տեսնել անկարելի է. մթշուառ է այն դպրոցը, ուր տիրումէ ճիպոտը, ասումէ Դիստերէգը, բայց մթշուառ է և այն, ուր ուսուցիչը զգումէ իւր զեկավարական գործիքների մէջ պակասութիւն»: Անգլիական դպրոցներում ճիպոտը գործածումէ ոչ միայն փոքր այլ և բարձր դասարանների մէջ: Վեստմինստրի դպրոցի նախկին ուսուցիչներից մի ծերը պարծենումէր, թէ կարգով ճիպոտ է ուտեցրել իւր ժամանակուայ բոլոր նախարարներին նոցա պատանեկութեան հասակում:

Գալով Ուսուաստանին՝ հետեւեալ հանգամանքին ենք հանգիպում, որ խիստ բարդումէ հարցը. մի կողմից հասարակութեան կրթուած շրջաններում անպայման հակառակ են մարմնաւոր պատժի. միւս կողմից ժողովրդի ստորին խաւերում խիստ մեծ հաւատ կայ ճիպոտի փրկարար զօրութեան վրայ: 25—30 տարի առաջ յայտնի մանկավարժ Պիրոգովը, որ Կիեվի ուսումնարանական շրջանի կառավարիչն էր, երբ հարց դրեց՝ չէ կարելի արգեօք բոլոր դպրոցներում ոչնչացնել ճիպոտը, մանրակիտ դատողութիւններից յետոյ, եկաւ այն եղբակացութեան, որ չէ կարելի ոչնչացնել, և որ մարմնաւոր պատիժը ժամանակաւորապէս հարկաւոր է թողնել դպրոցում, իբրև մի անխուսափելի չարիք, որ կեանքի պայմաններումն է սնունդ ստանում:

Պիրոգովը ուրեմն անկարելի էր համարում գուրս անել դըպրոցից ճիպոտը, քանի որ արտաքին կեանքի մէջ նա մեծ գործ էր տեսնում: Բայց հասարակութեան բարքերը նշանաւոր չափով փոխուել են դէպի լաւը այն օրից յետոյ, երբ յայտնել են յիշեալ միտքը. աւանդութիւն են դարձել այն երեսոյթները, երբ Եշվանութիւն ունեցողը ձեռնամուխ էր լինում վնասելու օրէնքի պաշտպանութեան տակ գտնուած մարմնի ապահովութեան:

Ներկայումս կան շատ բարեկարգ ուսումնարաններ, ուր ճիպոտը բնաւ չէ երևում: Ճիպոտ գործածող գպրոցը հազուագիւտ բացառութիւն է այժմ: Ճշմարիտ է, որ միւնոյն ժամանակ աւելի պարզ գանգատներ են լսուում ուսանող պատանիների սանձարձակութեան մասին: Իսկ այդ վիճակից դուքս գալու միջոց համարել ճիպոտի գործածութիւնը ընդունելի չէ ոչ մի կերպ: Նախ և առաջ սանձարձակութիւն նկատուում է, գլխաւորապէս միջնակարգ գպրոցների բարձր դասարանների աշակերտաց մէջ, որոնք առաջ էլ համարեա ազատ էին ճիպոտից. մինչդեռ անտարակոյս սկզբնական դպրոցը կարգի է բերուած, զեկավարութեան ենթարկուած և ազնուացած է նախկին զեկավարական եղանակի փոխուելուց յետոյ, որի անկիւնաքարը ճիպոտն էր, և ոչ գըպրոցի, ոչ հասարակութեան շահերը չեն պահանջում, որ ճիպոտի գործածութիւնը վերանորոգուի ժողովրդական դպրոցում: Երկրորդ. դեռ շատ զեկավարական միջոցներ կան, որոնք առաջարկուում են մանկավարժութեան կողմից և որոնք փորձուած չեն դեռ այն պատճառաւ, որ ուսուցիչների մեծ մասը բնաւ չէ ստացած մանկավարժական կրթութիւն: Նախ քան ճիպոտի օգնութեան դիմելը, արդեօք հարկաւոր չէ փորձել և իմանալ միւս միջոցների գործնական նշանակութիւնը, որոնք ոչ տեսութեան, և ոչ հասարակական կարծիքի կողմից այսքան էլ դատապարտելի չեն: Ինչ որ առել ենք մինչեւ այժմ՝ սորա վրայ հարկաւոր է աւելացնել նաև այն, որ մարմնաւոր բոլոր պատիժները առողջութեանը վնասակար են, իսկ ճիպոտելը մանաւանդ վնասակար է այն պատճառաւ, որ նպաստումէ ծածուկ արատաւոր հակումների զարգանալուն: Ճիպոտի կոյր պաշտպաններից շատերը չեն էլ կասկածում, որ երբեմն երեխան սրտի առանձին գոհութեամբ է պառկում ճիպոտի տակ: Իսկ որ այդ պատահում է՝ մենք գիտենք ժանժակ բուսոսոյի խոստովանութիւնից:

գ) Պատիժների յաջորդականութիւնը: Դպրոցական պատիժները չետևեալ աստիճաններով պիտի գործադրուին. 1) ցածրաստիճանն է՝ պատիժ հայեացքով, նշանով և որևէ շար-

ժուածքով: Եթէ աշակերտի վրայ նկատուում է անուշադրութիւն, անկարգութիւն կամ եթէ նա ցրուած է երեւում, մեծաւ մասամբ բաւական է լինում վերոյիշեալ պարզ միջոցներով հասկացնել նորան, որ նորա անկարգութիւնը նկատուած է և աշակերտը միտքն է բերում իւր պարտականութիւնները: Խոկ եթէ սպասուածը չկատարուեց, հարկաւոր է պատժել խօսքով: Աշակերտին բացադրում են նորա արած անկարգութիւնը և ցոյց են տալիս դորա վատ հետեւանդները: Սորանով զգուշացնում են աշակերտին: Երբ հարկաւորութիւն զգացուի, կարող է երեւալ սպառնալիք, որի նպատակն է ոչնչացնել արգելուած գործողութեան տուած բաւականութիւնը: Եւ երբ սպառնալիքը չէ ազգում պէտք է կատարել այն, ինչով որ սպառնացել են՝ նկատողութիւն են անում աշակերտին կամ սաստում են: Հարկաւոր է չմոռանալ, որ խօսքով պատժելը այն ժամանակ միայն նշանակութիւն ունի, երբ չէ կրկնում խիստ յաճախ. խոկ ուսուցչի մշտական բռբռալը աշակերտներին չորացնելուց զատ ուրիշ հետեւանք չունի: Մասնաւորապէս սպառնալիք յայտնելիս հարկաւոր է լաւ մնածել: Եթէ ուսուցիչը ըսպառնում է անել այն, ինչ որ չէ կարող անել, կամ չպիտի անէ, սպառնալիքը գառնում է գատարկ խօսք, որով և ուսուցչի հեղինակութիւնը կոտրւում է: Խօսքով պատիմները երկու ձեռվ կարող են արտայայտուել՝ փափուկ ձեռվ և աւելի խիստ: Պատժի ամենափափուկ ձեռն է, երբ աշակերտին առանձնացնում են նախապէս նկատողութիւն անելու համար. յետոյ կարելի է պատժել խօսքով մի քանի ընկերների առաջ, վերջապէս նաև ամբողջ գատարանի առաջ, բոլոր աշակերտների և ուսուցչական խմբի առաջ և այլն:

3) Պատժի բարձր աստիճանն է գործով պատժելը. այդ տեսակ պատիմներ են՝ ոտքի կանգնեցնել գասարանական սեղանների յետեւը կամ գրան տակ, որեւէ զուարձութիւնից զրկել, պատուաւոր յանձնարարութիւնից զրկել, ստիպողական պարապմունք նըշանակել, գասերից յետոյ պահել գասարանում և այլն:

4) Պատժի գործածութիւնը: Պատիմներ գործածելիս հարկաւոր է աչքի առաջ ունենալ հետեւեալ կանոնները:

1) Խըրեւ մի զեկավարական միջոց պատիժ գործածելը չափաւոր պիտի լինի և զգուշութեամբ։ Ինչ որ ասուած է վերեւում՝ դորանից երեւումէ, որ պատիժը դաստիարակական միջոցների մէջ մի անհրաժեշտ օգակ չէ։ Դորա օգնութեանն է դիմում ուսուցիչը, երբ հասել են իւր բոլոր միջոցները, որոնք կարող են ազդել աշակերտների վերայ։ Աւրեմն նախ քան պատիժ տալը, հարկաւոր է համոզուած լինել, որ պատիժի օգնութիւնը իսկապէս անհրաժեշտ է։ Ապա միենոյն մոքերը ստիպումէն գործնել առաւելապէս պատիժի աւելի փափուկ ձեւերը, և երբէք չէ հարկաւոր աւելի խիստ միջոցների դիմել, երբ դեռ փորձուած չէ աւելի փափուկ միջոցների ազդեցութիւնը։ Եթէ կարելի է յետ պահել աշակերտին մի հայեացքով, հարկաւոր չէ խօսքի դիմել։ Եթէ աշակերտի անունը տալով կարելի է նորա ուշադրութիւնը իւր գործի վրայ ուղղել, աւելորդ է զգուշացնել խօսքերով։ Եթէ նկատողութիւնը ունի ազդեցութիւն, սպառնալու կարիք չկայ։ Եթէ սպառնալիքը իւր գործը տեսաւ, կարիք չկայ գործով պատժել։ Հարկաւոր չէ նմանապէս արագ արագ մէկ միջոցից միւսին դիմել, պէտք է սպասել և դիտել ինչ գործողութիւն է անում իւրաքանչիւր միջոցը։ Այլապէս միջոցները սպառած կարող են լինել։ Հարկաւոր չէ միակերպութիւն պահել պատիժ նշանակելիս։ Ինչպէս մարմնաւոր տկարութիւն բժըշկելու համար չկայ մի հանրական միջոց, այնպէս էլ չկայ այդպիսի միջոց բարոյական տկարութեանց համար։ Ինչպէս մարմնաւոր տկարութեան իսկական դեղը գտնելու համար հարկաւոր է ճշգութեամբ որոշել հիւանդութիւնը, այնպէս էլ հարկաւոր է աշակերտի յանցանքը ուշադրութեամբ դիտել և քննադատել որպէս զի նորա դէմ ուղղուած միջոցը իւր օգուտն անէ։

2) Պատիժը սերտ կապ պիտի ունենայ այն գործողութեան հետ, որը պատիժի է արժանացել։ Պատիժը յանցանքի ընական հետեւանքը պիտի լինի։ Ով գասը բաց է թողել, նա ստանումէ ստիպողական պարապմունք ազատ ժամանակին։ Կռուարարին հեռացնումէն ընկերակիցների շրջանից։ Խարերան պատժւումէ, որովհետեւ վստահութիւն չեն ընծայում նորան և այլն։ Երբ

պատիժը յանցանքի հետ կապ չունի բնաւ, կամ այսպահութիւն է երևում և գժգոհութիւն կարող է յարուցանել ուսուցչի դէմ: Յանցանքից յառաջացած պատիժը տանում են լուս: Մինչև անգամ փոքրիկ տղայք չեն լալիս, երբ պատիժ են կրում արժանաւորապէս: Բնական պատիժը իսկականն է:

3) Պատիժ չպիտի նշանակել գրգռման կամ բարկութեան ժամանակ: Այդ դէպքում միշտ վտանգ կայ, որ խիստ կլինի պատիժը: Առաւել ևս անտեղի է գոհութիւն յայտնել պատիժ նըշանակելիս: Պատիժի դիմելիս ուսուցիչը չէ կարող սրտացաւ ցինել և չիշտանալ աշակերտի համար: Թող հոգեկան այդ վիճակը արտայայտուի ուսուցչի համապատասխան ձայնով և խօսելու ոճով: Ծակայն չէ կարելի գովել այն ուսուցիչներին, որոնք պատիժ ի կատար ածելուց յետոյ, աշխատում են իսկոյն անհետացնել պատիժ նշանակութիւնը կարգէ դուրս փաղաքշանք թափելով աշակերտի առաջ, Այդպիսի վարժունքը մի տեսակ զղջումն է աշակերտի առաջ անցեալի համար և չէ կարող վնաս չտալ ուսուցչի հեղինակին:

4) Պատիժը արդարացի պիտի լինի: Պատիժ նշանակելիս հարկաւոր է ի նկատի առնել յանցանքի ոչ արտաքին նշանները, այլ ներքին շարժառիթները: Այդ կողմից յանցանքը հարկաւոր է խստութեամբ քննադատել և միւնոյն ժամանակ ուշադրութեան առնել յանցաւորի հակումները, նորա հասակը, որ սեռի պատկանիլը, բնութիւնը, առողջութիւնը և այլն: Պատիժը պիտի չճնշէ, այլ յուղէ գրգռէ աշակերտի բարի բնազդումները:

5) Ընդելացման ճառին: Աշակերտին մի որ և է գործողութեան ընդելացներու համար հարկաւոր է սոտէպ սոտէպ վարժութիւն տալ նորան այդ գործողութեան մէջ: Հարկաւոր է ընդելացնել մանաւանդ այն գործողութեանց, որոնք յառաջացնում են բարձր բարոյական մտապատկերներ և պահպանում են հոգեկան արժանավայել տրամադրութիւն:

Ընդելացման նպատակն է՝ տալ աշակերտին գործնական հըմ՝ տութիւն առաքինութեան գործերում: Այդ նպատակը գպրոցական դեկապարութեան իսկական նպատակն է ընդհանրապէս՝ ա-

շակերտի բնութեան մէջ հաստատուն սովորոյթ մշակել բարոյական լուրջ տրամադրութիւն և բարի վարք պահպանելու գորանով լաւ հող պատրաստել բարոյական աղատ գործունէութեան համար առաքինութեան ճանապարհով ուղղած։ Առիթներ և դէպքեր ներկայացնելով աշակերտի առաջ բարի ձգտումներով և նպատակներով ոգեսորուելու համար, եռանդագին նպաստելով այդ զգացմունքների ամրանալուն համապատասխան գործողութիւններով, այդ նպատակների համաձայն կազմակերպելով աշակերտական ամբողջ կեանքը, ուսումնարանը զեկավարումէ երեխաների ձգտումները և հակումները, սահմանափակում ճնշումէ եսամոլ միտումները, փարժեցնումէ վայելուչ գործունէութեան մէջ, ազնուացնումէ զգացմունքը և հեշտացնումէ անձին տէր լինելու համար պէտք եղած աշխատանքը։ Շատ մարդիկ լաւ ուղղութեան մէջ հաստատուեցան մանտւանդ գրպարոցի այդ անընդհատ և յաջորդաբար ընթացող գործողութեան շնորհիւ յիշեալ ուղղութեամբ։ Հակառակ սորան՝ ուր դպրոցը յապաղումէ բարւոյն ընդելացնելու երեխային, ուր նա խրստութեամբ չէ կատարում ընդելացման օրէնքները, ուր այդ պատճառաւ կարողացել են արդէն արմատանալ վատ, թեթեւամիտ սովորոյթներ, այնտեղ ամենաէական խոյընդուների են հանդիպում դպրոցի դաստիարակչական նպատակները։ Որովհետեւ դպրոցի բոլոր զեկավարական միջոցները յաջողութիւն են ունենում ընդելացման գործողութեան շնորհիւ, այդ պատճառաւ ընդելացումը համարւումէ դաստիարակութեան գործիքներից ամենապէտքականը և զօրեղագոյնը։

Դեռ բէկօնի խօսքերով՝ դաստիարակութիւնը լոկ ընդելացումն է։

Ընդելացման հետեանքն է սովորոյթ։ Սովորոյթի ոյժը այնքան զօրեղ է, որ ժողովուրդը անուանումէ նորան երկրորդ ընութիւն։ Մանկութեան հասակի սովորոյթները անջնջելի են. Սակայն սովորոյթի համաձայն կատարուած գործը դեռ խիստ բարոյական գործ կարող է և լինել։ Որպէսզի սովորոյթի հաբարոյական գործ կարող է և լինել։ Որպէսզի սովորոյթի համաձայն գործողը միշտ ճշմարիտ բարոյական գործողութիւններ

անէ, հարկաւոր է, որ նա ունենայ բարոյական ճանաչողութիւն, պարտաճանաչութեան գաղափար և գործողութիւն ընտրելու ազատութիւն։ Սովորոյթը ստանումէ այդպիսի բնաւորութիւն լաւ ուղղութեամբ գործող ուսուցման շնորհիւ։

Ընդելացման գործը աւելի կամ պակաս գժուարութեամբ է կատարւում՝ տեսնելով թէ՝ ինչ հասակի տղայոց հետ գործ ունին և նոցա տնային գաստիարակութիւնը որպիսի բնաւորութիւն ունի։ Մանկական հասակի վերաբերեալ ընդելացումը համեմատաբար աւելի թեթև գործ է, քան թէ հետևեալ հասակների վերաբերեալ։ Երեխային յարմար է որևէ սովորոյթ հաղորդել, որ նա էլ ունենայ, ոգովիհետեւ նորանում գեռ ոչինչ չկայ կազմակերպուած և հաստատուն բան։ Աւելի գժուարին է ընդելացնել մի բանի բարձր գասարանի աշակերտներին, մանաւանդ եթէ նոքա զեկալարութեան անկանոն ընթացքի պատճառաւ գիմադրական ուղղութիւն են ստացել։ Ահաւասիկ ինչու համար գաստիարակը արթուն աչքով պիտի հետևէ մեծ աշակերտների և փոքրահասակների յարաբերութեանցը, յիշելով միշտ, որ փոքրները սովորաբար ձեակերպւում են մեծերի նմանութեամբ։ Շատ մեծ նշանակութիւն ունի նմանապէս ընտանիքը։ Եթէ ընդելացման գործում գպրոցը և ընտանիքը միաբան են և համերաշխ, ամենալաւ արդիւնքներն են ստացւում։ Խոկ ընտանիքի իւրաքանչիւր սխալը և թուլութիւնը սաստիկ գժուարացնում են ուսուցչի ընդելացնող աշխատանիքը։

ԷԿԻՈՆ Վ. ԽՈՉԱՑԵԱՆ.